



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

Հետազոտության թեման՝ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Առարկան՝ ԱՆԳԼԵՐԵՆ

Հետազոտող ուսուցիչ՝ ՄԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

*Ուսումնական հաստատություն՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 117 ԴՊՐՈՑ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԴԵՐԸ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՍԱՆԱԿ.....7

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ. ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԻՆ.....9

ԳԼՈՒԽ 3

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՌԴՐԱԿԱՆ ՀԱՐԱՂՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱՂՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՀՏ-Ի ԿԻՐԱՌՄԱՄԲ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ

կիրառումն այն ամենի ինչ գիտես:

Դիստերվերգ

Լեզուն իրացվում է հասարակության լեզվական գործունեությամբ, հաղորդակցման միջոցով, և հենց մարդու հաղորդակցումով օտարվում ու դառնում է օբյեկտիվ ռեալություն: Հաղորդակցման մեջ, խոսելու ընթացքում լեզուն իրացվում է իրական խոսքի միջոցով: Եվ քանի որ խոսքը, իր հերթին, ոչ այլ ինչ է, եթե ոչ անհատի, տվյալ մարդու խոսքային գործունեության արդյունք, ապա սա ինքնին պահանջում է խոսքի ու լեզվի և, դրա հետ միասին ու դրա միջոցով, անհատականի ու հասարակականի փոխհարաբերության լուսաբանություն:

Խոսքը մասնավոր դրսևորումն է, բառաձևերի, բառակապակցությունների ու նախադասությունների, դրանց կազմության ու գործադրության կանոնների այն ամբողջ հարստության, որ ներկայացնում է տվյալ լեզուն տվյալ վիճակում, իբրև պատմական զարգացումով ձևավորված և խոսողներից յուրաքանչյուրի գիտակցության մեջ որպես լեզվական ներունակ կարողություն հաստատված վիճակ: Յուրաքանչյուր բառ, քերականական ձև, բառերի կապակցությունների կանոններ և այլն խոսքից դուրս վերացական միավոր է:

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատվում են մարդու խոսքի զարգացման հետևյալ փուլերը.

1. մանկական տարիք (մինչև 1 տարեկան)՝ գեղգեղանք և թոթովանք,
2. մտորային տարիք (մինչև 3 տարեկան)՝ բառի հնչյունային և վանկային կառուցվածքի, նախադասության բառերի միջև գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային),
3. նախադպրոցական տարիք (3-ից մինչև 6 տարեկան)՝ մենախոսության և ենթատեքստային խոսքի, պարզ ներքին խոսքի դրսևորում,
4. կրտսեր դպրոցական տարիք (7-ից մինչև 10 տարեկան)՝ խոսքային ձևերի ըմբռնում (բառի հնչյունային կազմ, բառապաշար, խոսքի քերականական կառուցվածք), գրավոր և բանավոր խոսքի, նրանց մատչելի նորմերի տիրապետում, մենախոսելու կարողության բուռն զարգացում,
5. միջին դպրոցական՝ դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝ խոսքի գրական նորմերի, ոճի՝ ըստ ամենայնի տիրապետում, անհատական ոճի ձևավորում:

6.ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք (15-ից մինչև 17 տարեկան)՝ խոսքի մշակույթի կատարելագործում, լեզվի առանձնահատկությունների տիրապետում, անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում:

Մեթոդական այս խնդիրները լուծվում են այն գիտությունների միջոցով, որտեղից մեթոդիկան քաղում է իր համար սկզբունքորեն կարևոր տեղեկատվություններ: Այդ գիտություններից առաջատարը լեզվաբանությունն է, հոգեբանությունը և մանկավարժությունը:

Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով գիտության և պրակտիկայի կապը:

Այս ամենից գատ , կարևոր է ուսուցչի և սովորողների ծնոնդերի, նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը, սովորողների հաղորդակցումը, նրանց գրագետ խոսքը ձևավորելու համար: Հարկավոր է համագործակցել սովորողների դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար , քանի որ ավելի հեշտ է դաստիարակել , քան թե վերադաստիարակել : Վերադաստիարակությունը սովորողների մեջ ոչ ճիշտ կամ ոչ լրիվ ձևավորված բարոյականային հատկանիշների, բնավորության գծերի, սովորույթների, արարքների, վարքի բարեփոխումն ու կատարելագործումն է՝ հասարակության նորմերին համապատասխան , նախապես ճիշտ ընտրված մեթոդների ու հնարների միջոցով՝:

Խոսքային հաղորդակցումը մշտապես ուղեկցելու է մեզ, այն մեր առօրյայի անբաժանելի մի մասն է և մշտապես բացահայտվելու կարիք ունի:

Ճերդինանդ դե Սոսյուրը լեզուն բնորոշեց որպես հասարակական երևույթ, ըստ որում այս դեպքում նա լեզուն դիտում էր որպես ամբողջական և համասեռ երևույթ, որի մեջ միաժամանակ ու միասնաբար հանդես են գալիս բնախոսականը, ֆիզիկականը և իմաստայինը: Դրանից ելնելով է հասարակական երևույթ , իսկ խոսքը՝ անհատական: Հիմք ընդունելով այս և մի շարք այլ ելակետային դրույթներ՝

Մոսյուրը , խոսքի անհատականությունը շեշտելով, ընդգծում էր նաև , որ «խոսքային գործունեությունն ունի և՛ անհատական, և՛ հասարակական կողմ, ընդ որում չի կարելի հասկանալ մեկն առանց մյուսի»¹ :

Լեզուն, խոսքը հասարակական-պատմական զարգացման արդյունքն են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ ամենալայն իմաստով:

Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության արդյունքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

Խոսքի զարգացումը նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ , նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների , բոլոր օրինաչափությունների տեսակետից² :

Հայտնի լեզվաբան Մ. Վ. Պլանովը «լեզու» և «խոսք» հասկացությունների բացահայտման նպատակով ներկայացնում է մի ուշագրավ նույնություն. «Պատկերացրեք մի հաստոց, որից անընդհատ դուրս են գալիս նոր ժամացույցներ: Դրա համար անհրաժեշտ են. առաջին՝ նախապես պատրաստված մասեր, երկրորդ՝ հայտնի կանոնների համապատասխան պատրաստի մասերի հմուտ համակցում: Այդ կանոնները կարող են ինչ-որ տեղ գրված լինել, բայց կարևորը դրանց՝ հավաքող վարպետի գլխում լինելն է »³ :

Այս համեմատության մեջ ժամացույցի մասերը բառերն են, լեզուն, իսկ պատրաստի ժամացույցը՝ խոսքը:

Խոսքային հաղորդակցման ընթացքում մեզ համար կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել խոսքային հաղորդակցման էությունն ու դրա կազմակերպման արդյունավետ եղանակները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

¹ В. А. Звегинцев, История языкознания XIX XXвеков в очерках и извлечениях, часть I, 1960, с. 324.

² Արբահամյան Ս. Գ., Աշոկերտի խոսքի զարգացումը, Ե., Լույս, 1973, էջ 75:

³ Энциклопедический словарь юного филолога, Сост. М. А. Азров, М., 1984 сс. 338-339

2. բացահայտել խոսքային հաղորդակցմանը նպաստող ուսուցման մեթոդները,

3. անդրադառնալ խոսքային հաղորդակցման իրականացմանը անգլերենի դասաժամերին :

ԳԼՈՒԽ 1

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԴԵՐԸ ԽՈՍՔԱՅԻՆ ՀՍԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բոլոր ժամանակներում էլ խոսքը գորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Ցանկացած կիրթ մարդ, մտավորական և հատկապես ուսուցիչ պարտավոր է բարձր մակարդակով տիրապետել մայրենի լեզվին, քանի որ հենց ինքն է հասարակությանն առաջ մղողը, նրան վեհ գաղափարներով զինողն ու դաստիարակողը:

Ուսուցիչն, ընդունելով իրեն վստահված ամենահզոր զենքը՝ լեզուն, պետք է կարողանա զգուշությամբ և վարպետորեն կիրառել այն՝ անընդհատ կատարելագործելով իր մասնագիտական կարողությունները՝ կիրթ, գեղեցիկ և հետաքրքիր խոսք կառուցելու համար: Անառարկելի փաստ է, որ աշակերտին ոգևորող լավագույն օրինակը ուսուցչի խոսքն է, ուստի ուսուցիչը պետք է խորությամբ զգա և ընկալի մայրենի լեզվի յուրաքանչյուր հնչյուն, բառ, արտահայտություն՝ վերջիններից իմաստային բոլոր դրսևորումներով, այսինքն՝ ունենա լեզվազգացողության բարձր մակարդակ: Ուսուցիչը պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրի դասավանդվող նյութը, որպեսզի աշակերտների բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման աշխատանքներն իրականացնի ճիշտ մեթոդաբանությամբ:

Ուսուցչի լեզվամտածողության զարգացմանը մեծապես նպաստում են ճարտասանական գիտելիքներն ու դրանք գործնականում կիրառելու կարողությունը: Ուսուցչի խոսքը պետք է լինի հարուստ և բազմազան, ճշգրիտ և հստակ, պարզ և մատչելի, սեղմ և տրամաբանական, արտահայտիչ, պատկերավորման արտահայտչական միջոցների կիրառմամբ: Ուսուցչի արտահայտիչ պատկերավոր խոսքն անհամեմատ ազդեցիկ է, ուժեղ. այն հարստացնում է խոսքի բովանդակությունը, գորացնում է արդյունավետությունը: Ոչ միայն ազդում է աշակերտի մտքի վրա, այլև արթնացնում է նորանոր զգացումներ, վառում է երևակայությունը: Դրանով նա իր խոսքը դասարանի համար դարձնում է ավելի հետաքրքիր, իսկ հաղորդվող միտքն ավելի ընկալելի: Հնչերանգը բանավոր խոսքի կարևոր տարրերից է և պայմանավորվում է մի շարք գործոններով՝ խոսողի անհատականությունը, հաղորդման տեսակը, իրադրությունը, խոսողի հոգեվիճակը, խոսքի կառուցվածքը դասարանի սոցիալ- հոգեբանական կազմը և այլն:

Ուսուցիչը պետք է պահպանի ուղղախոսության բոլոր կանոնները. ուղղախոսական շեղումներ

առաջանում են բարբառների և օտար բառերի ազդեցությամբ, ինչպես նաև ժողովրդական ստուգաբանության հետևանքով:

Դասի ժամանակ ուսուցիչը պետք է մի կողմ թողնի առօրյախոսակցական ոճը և այն կիրառի խիստ անհրաժեշտության դեպքում, օրինակ գրականության նյութը մատուցելիս:

Ուսուցիչը պետք է սահմանի որոշակի դիմելաձև, ցանկալի է աշակերտին դիմելիս հնչեցնել նրա անունը լիարժեքորեն, առանց փաղաքշական երանգների և կրճատման: Ուսուցիչն իր սերը պետք է արտահայտի զուսպ բառապաշարով, սիրալիր , հոգատար հայացքն ու վերաբերմունքը ավելի գերադասելի են:

Ուսուցիչը պետք է մեծ ուշադրություն դարձնի ձայնի տեմբրին, հնչերանգը անչափ կարևոր դեր ունի դասի մատուցման ժամանակ: Հնչերանգի փոփոխության ժամանակ կարևոր են նաև տրամաբանական դադարները:

Կարևորում ենք նաև հանդիսավոր ելույթին վայել ուսուցչի ճարտասանական խոսքը , այն կարևոր միջոց ենք համարում դասի ժամանակ սովորողների ուշադրությունը գրավելու համար: Ուստի ուսուցչի խոսքը պետք է համեմված լինի հանդիսավորությամբ և ճիշտ ընտրված հնչերանգով :

Ուսուցիչը պետք է խուսափի դժվար ըմբռների բառերի կիրառումից, կարելի է ընտրել դրանց մատչելի տարբերակները. այս հանգամանքը կարևոր ենք համարում նամանավանդ ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ: Տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով հարկավոր է դասին համընթաց , զուգահեռաբար հարստացնել սովորողների բառապաշարը , բայց ոչ դասի նյութը մատուցելիս, եթե իհարկե խոսքը չի վերաբերում բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցմանն ու գեղարվեստական գրականության նյութի մատուցմանը:

Անառարկելի փաստ է, որ ուսուցչի խոսքը պետք է լինի մատչելի, որքան մատչելի , այնքան դասը հասկանալի, մատչելի, բայց ոչ պարզունակ: Ուսուցչի խոսքը պետք է համեմված լինի մակդիրներով, համեմատություններով, բառակրկնություններով, փոխաբերություններով, շրջասույթներով, բառերի ձևաիմաստային խմբերից ընտրված ճիշտ օրինակներով:

Դասի առաջին բոլորները շատ կարևոր են հետագայում հաջողության հասնելու, սովորողների ուշադրությունը գրավելու, դասի նպատակներին հասնելու, դասի խնդիրները լուծելու , դասը հաջողված համարելու համար: Ուստի ուսուցիչը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի դասի առաջին բոլորների վրա, որի ժամանակ վճռական դեր ունի ուսուցչի խոսքը: Ուսուցիչը պետք է խուսափի օտարաբանություններից , անհարկի բարբառայնությունից, գոեհկաբանությունից:

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՈՒՄՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ. ԽՈՍՈՒՄՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՄԻՆ

Ուսուցչի կարևորագույն գործառնություններից է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը, նախևառաջ, պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով, մեր դեպքում մենք կհիմնվենք անգլերենի վրա:

Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է՝ դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ **գործիքը** ուսուցման նախապես պլանավորած նպատակներին հասնելու համար:

Խոսքային մեթոդները լայն կիրառություն ունեն անգլերենի դասերին. գեղարվեստական ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը, ազատ շարադրանքները և այլն: Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ, անշուշտ, կարելի է օգտագործել նաև դիտողական պարագաներ: Խոսքային մեթոդների արդյունավետությունը մասնավորապես ակնառու է ներկայացումների դիտման, դրանց քննարկման, ներկայացման թեմաներով (կամ կինոնկարների, կարդացած ստեղծագործությունների) բանավեճերի, հանդիպումների և խոսքային բազմազան վարժանքների կատարման ժամանակ:

Խոսքային մեթոդներն են.

1. Զրույց
2. Դպրոցական դասախոսություն
3. Պատմություն
4. Բացատրում,
5. Աշխատանք դասագրքով

Խոսքային մեթոդների օգնությամբ լուծվում են սովորողներին համակարգված գիտելիքներ հաղորդելու, նրանց մոտ խոսքի կուլտուրայի ձևավորման խնդիրները: Նրա արդյունավետության կարևոր պայմաններ են խոսքի մատչելիությունը, արտահայտչականությունը, հստակ տրամաբանական կառուցվածքը, պատկերավորությունն ու ապացուցականությունը:

Զրույց

Զրույցի նպատակը սովորողին այս կամ այն հարցի շուրջը խորհրդածելուն մղելն է: Ուսուցիչը հատուկ կազմակերպված հարցերի միջոցով դրդում է աշակերտին դատողություններ ու վերլուծություններ կատարել փաստերի և երևույթների մասին, որի արդյունքում ինքնուրույն հասնում է համապատասխան տեսական եզրակացությունների ու ընդհանրացումների:

Դպրոցական դասախոսություն

Սա ուսուցման մի մեթոդ է, որի դեպքում ուսուցիչը բավական երկար ժամանակ բանավոր շարադրում է նկատելի ծավալով ուսումնական նյութ, օգտագործելով սովորողների իմացական գործունեության ակտիվացման որոշակի հնարներ:

Այս մեթոդի գլխավոր գործառույթը համակարգված և խոր տեսական գիտելիքներ հաղորդելն է: Այն կիրառելի է հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում:

Պատմություն

Պատմելը նկարագրական բնույթի ուսումնական նյութի վառ կենդանի ներկայացումն է:

Սովորաբար այս դեպքում ուսուցիչը փորձում է չդրսևորել իր վերաբերմունքը երևույթների նկատմամբ, աշակերտին մտածելու և ինքնուրույն եզրակացություններ անելու ազատություն տալով:

Բացատրում


Բացատրումը ուսուցման այն մեթոդն է, երբ ուսուցիչը ոչ այնքան նոր նյութ է հաղորդում, որքան վերլուծում է նոր ուսումնական նյութը, պարզաբանում և ապացուցում է այս կամ այն դրույթը:

Աշխատանք դասագրքով

Այս մեթոդի հիմնական նպատակը սովորողներին ուսումնական գրականության հետ աշխատել սովորեցնելն է: Լայն առումով այն իր մեջ ներառում է անհրաժեշտ տեղեկատվության որոնման, մշակման և ընտրողաբար յուրացման կարողությունների ձևավորումը:

Բարձրորակ ուսումնական գիրքը հաջողությամբ կարող է լուծել ուսուցման զարգացնող, դաստիարակող, խթանող և վերահսկող ֆունկցիաները:

Խոսքային մեթոդների արդյունավետության և համեմատության դիագրամա



Անդրադառնանք խոսքային մեթոդներին և ներկայացնենք դիագրաման:

Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը խոսքային մեթոդներից զրույցն այնուամենայնիվ մնում է առաջատար: Արդյոք ինչու՞ է այսպես: Բանն այն է, որ անգլերենի դասավանդման ժամանակ աշակերտները զրուցելու և խոսելու կարիք ունեն, սակայն արդյունավետությունը միայն դա չէ, այլ այն, որ ուսուցչի հսկողությամբ տեղի է ունենում սխալների ուղղում և այն էլ ճիշտ պահին: Փորձը ցույց է տալիս, որ ավելի լավ է աշակերտին հետ պահել սխալից, քան թե սխալն ուղղել, իսկ զրույցի ժամանակ ուսուցիչն օրինակի միջոցով ներկայացնում է խոսքի կառուցման ճիշտ տարբերակը, իսկ աշակերտները հետևելով նրան կրկնում են ճիշտը՝ զերծ մնալով սխալներից, սակայն եթե նույնիսկ սխալ խոսք են կառուցում, ապա ուսուցիչը կարողանում է անմիջապես ուղղել և ես , վստահ լինելու համար, որ աշակերտը հասկացել է սխալը, նաև տեստում գրել եմ տալիս և այն էլ կանաչ գույնի գրիչով, որպեսզի լինի տեսանելի , իսկ «Կանաչ գրիչ»-ի մեթոդը պարզապես հիանալի տարբերակ է աշակերտի ուշադրության կենտրոնում պահելու համար իր համար կարևոր արտահայտություններն ու բառերը, որոնք տարբեր աշակերտների համար կարող են տարբեր լինել:

2-րդ տեղում է խոսքային մեթոդներից «Բացատրումը», զրույցից փոքր-ինչ ետ է մնում , սակայն գրեթե հավասարապես արդյունավետ է: Այս մեթոդը շատ հաճախ կիրառելի է՝ դասի տարբեր փուլերում: Սակայն փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ է , երբ դասը հասկացած աշակերտն է մյուսին բացատրում: Օրինակ նոր նյութը մաս-մաս հաղորդելիս ես կանգ եմ առնում և հարցնում՝ արդյոք կա՞ն անհասկանալի հարցեր, աշակերտները վստահորեն ձեռք են բարձրացնում եթե կան, սակայն բացատրելիս ոչ թե ես եմ ներկայացնում հարցի պատասխանը, այլ այն աշակերտը, ով արդեն հասկացել է այն, ինչը դիմացինը չի ընկալել:

«Պատմություն» և «Աշխատանք դասագրքով». կան առաջադրանքներ , երբ նույնանում են այս մեթոդները .օրինակ 9-րդ դասարանում, մինչ նոր նյութը ներկայացնելը , էլեկտրոնային գրառախտակին ես ցույց եմ տալիս դասի հետ առնչվող մի նկար և խնդրում մեկնաբանել այն¹.



նկար 1

¹Տես՝ Գասպարյան Գ., Հովհաննիսյան Ն., Քաջբերունի Հ., English 9, մաս 1, Երևան, 2021, էջ 10,

Աշակերտները սկսում են ներկայացնել նկարը, հորինում են պատմություն, իսկ ցածր դասարաններում ես տալիս եմ նաև ուղղորդող բանալի բառեր և այդ բառերը գրում եմ գրատախտակին, դրանք հիմնականում նոր և անձանոթ բառեր են, որոնք անցկացնում են նաև բառատետր , այստեղ արդեն էականը դառնում է զարգացնել ստեղծագործական միտքը , միևնույն ժամանակ հարստացնել բառապաշարը և ճիշտ խոսք կատուցելու կարողություններ և հմտություններ զարգացնել:



նկար 2

Բանալի բառեր գործածելով հյուսիս պատմություն կամ ասա թե ի՞նչ ես տեսնում նկարում:

Բանալի բառեր՝ frog, prince, golden boll, garden, strange¹

Եվ վերջին տեղում է «Դպրոցական դասախոսությունը». խոսքային այս մեթոդը կիրառելի է հիմնականում բարձր դասարաններում, և այն էլ ոչ միշտ, այլ ամփոփման կամ կրկնության դասերին, երբ աշակերտներն արդեն յուրացրել են դասի նյութը, հիանալի տիրապետում են թեմայի բառերի և արտահայտությունների ուղղագրությանը և կարողանում են լսել փոքրիկ դասախոսություն, արդեն ծանոթ և իրենց իսկ կողմից կիրառելի բառերով, մնացած այլ դեպքերում այս մեթոդը չի գործում, մինչդեռ ինչպես տեսանք, մնացած չորսը՝ զրույցը, բացատրումը, պատմությունը և դասագրքով աշխատանքը գրեթե միշտ գործածական են և արդյունավետ:

տեղ՝ Gasparyan G., English 5, մաս 2, Երևան , 2019, էջ 36,

ԳԼՈՒԽ 3

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՌԴՐԱԿԱՆ ՀԱՐԱՂՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱՂՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՀՏ-Ի ԿԻՐԱՌՄԱՄԲ

Խոսքային հաղորդակցումը միշտ էլ կարևոր դեր է ունեցել թե նույնազգի մարդկանց շրջանակներում և թե քաղաքացի, իսկ այս հարցում մեզ օգնության են հասնում բառերը և հարուստ բառապաշարը: Մեր օրերում կարևորվում են այս կամ այն լեզվի բառակազմական համակարգին նվիրված ուսումնասիրությունները, քանի որ բառակազմական տարբեր եղանակներով լեզվում անընդհատ նորանոր բառեր են կազմվում, որոնք հարստացնում են լեզվի բառային կազմը, հետևաբար նաև լեզվակիրների բառապաշարը: Ուսումնական հաստատություններում մեծ կարևորություն է տրվում ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզուների բառակազմության ուսուցմանը: «Լեզուն իմանալ նշանակում է տիրապետել դրա կառուցվածքին և բառերին»¹: Արդի անգլերենի բառապաշարի մի մասը հանդիսացող առդրական հարադրությունների ուսուցումն առավել արդյունավետ և ընկալելի է դառնում հայերենի հետ զուգահեռներ անցկացնելիս և ՏՀՏ կիրառելիս: Առդրական են այն հարադրությունները, որոնց բաղադրիչները հարադրվելով՝ բնութագրում են միևնույն առարկան, երևույթը տարբեր կողմերից: Հայ բառակազմության մեջ սրանք հաճախ կոչել են նոր տիպի հարադրություններ՝ որպես այն ժամանակների համար նոր, ռուսերենի նմանողությամբ կազմված կառույցներ²: Սանսկրիտի քերականության մեջ այլ համադասական բաղադրությունների հետ միասին dvandva կոչված այս կառույցները ժամանակակից անգլերենում նաև տարբեր անվանումներ են ստացել, ինչպես՝ copulative compounds «հարակցված, կապակցված բարդություններ»³, additive compounds «գումարումային, հավելումային բարդություններ», appositional compounds «առդրական բարդություններ», appositive compounds «բացահայտչային բարդություններ»: Հաշվի առնելով այս կառույցներին բնորոշ կառուցվածքային, իմաստային հատկանիշները և բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները՝ ավելի ճիշտ է սրանք անվանել appositional compounds «առդրական բարդություններ»: դրանք լիովին համապատասխանում են հայերենի առդրական հարադրություններին: Appositional բառը նպատակահարմար ենք գտնում թարգմանել «առդրական» եզրույթով, քանի որ “(to) appose” անգլերենից

¹Տե՛ս Գ. Рогова, Методика обучения английскому языку (на английском языке), М., 1983, 131: 2

²Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 227–228, Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 269–271, Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 70 և այլն:

³Տե՛ս S. Olsen, Coordination in Morphology and Syntax: the Case of Copulative Compounds, “The Composition of Meaning: from Lexeme to Discourse”, Amsterdam/Philadelphia, 2004, էջ 17–37: <https://books.google.am/books?id=46kLFhR5gj4C&pg=PA2&lpg=PA2&dq=Olsen+S.,+Coordination+in+Morphology+and+Syntax:+the+Case+of+Copulative+Compounds>

թարգմանաբար նշանակում է «մոտ դնել, առդնել», իսկ նման կառույցների բաղադրիչները դրվում են կողք կողքի՝ բնութագրելով նույն մարդուն, առարկան և այլն: Թվում է, թե նման կառույցները երկու իմաստային կենտրոն ունեն, սակայն, օրինակ՝ Ի. Փլազը դրանց աջակողմյան բաղադրիչն է դիտում որպես իմաստային կենտրոն, քանի որ քերականական փոփոխությունների հենց դա է ենթարկվում, ինչպես՝ “There are many poet-translators in this country” – «Այս երկրում շատ բանաստեղծ-թարգմանիչներ կան»¹ : Առդրական հարադրությունները կարելի է աշակերտներին ներկայացնել ըստ այն իմաստային խմբերի, որոնցում դրանք ընդգրկվում են՝ սմարթ գրատախտակին, իսկ եթե արդեն հանձնարարված է եղել սովորել դրանք, ապա սմարթ գրատախտակին մոտենալով նրանք սկսում են ինքնուրույն համախմբել: Ես նաև օգտագործում եմ T-ձև աղյուսակը, իսկ հայերենում և անգլերենում դրանք համեմատելու համար օդտվում եմ Վենի դիագրամից: Նոր նյութը հաղորդելիս ես առանձնացնում եմ Գ+Գ կաղապարով առդրական հարադրությունների առավել տարածված իմաստային խմբերն ու ներկայացնում դրանք աշակերտներին : Անգլերենում կան նաև եռաբաղադրիչ ու քառաբաղադրիչ առդրական հարադրություններ, ինչպես՝ soldier-statesman-author-orator «զինվոր-պետական գործիչ-գրող-ճարտասան» և այլն, որոնք ես նույնպես ներկայացնում եմ SՅS-ի միջոցով՝ պատրաստելով սահիկ:

Զբաղմունք, մասնագիտություն lawyer-agent «փաստաբան-գործակալ»,

philosopher-painter «փիլիսոփա-նկարիչ»,

singer-composer «երգիչ-երգահան»,

writer-publicist «գրող-թղթակից» և այլն,

բժիշկ-մաշկագետ, երաժիշտ-մեկնաբան, թիկնապահ-օգնական, հաղորդավար-մրցավար, ներկարար-ծեփագործ և այլն,

Ռազմական գործ, պաշտոնավարություն

bombardier-navigator «հրետազորային-ծովագնաց»,

crusader-fighter «խաչակիր-մարտիկ»,

dictator-president «բռնապետ-նախագահ»,

officer-explorer «սպա-հետազոտող», soldier-citizen «զինվոր-քաղաքացի» և այլն, գեներալ-ֆելդմարշալ, գրահարար-հրկիզող, լորդ-քաղաքապետ, կապիտան-լեյտենանտ, մինիստր-վարչապետ և այլն,

¹ Ст' у Г. Рогова, Методика обучения английскому языку (на английском языке), М., 1983, 185

Առտնին իրեր, գործիքներ, փոխադրամիջոցներ, հագուստ

camper-trailer «տուն-մեքենա»,

hammer-axe «մուրճ-կացին»,

refrigerator-freezer «սառնարան-սառցարան»,

screwdriver-hammer «ստուտակիչ-մուրճ»,

skirt-trousers «կիսաշրջագեստ-անդրավարտիք» և այլն,

բազկաթոռ-մահճակալ, հնձիչ-խրձակապ, սայլակ-պատգարակ, վերնագգեստ-թիկնոց, տանկ-ականահան և այլն,

Գիր-գրականությունը, արվեստին առնչվող բառեր

album-book «ալբոմ-գիրք»,

letter- application «նամակ-դիմում»,

letter-CV «նամակ-ինքնակենսագրություն»,

newspaper-magazine «թերթ-ամսագիր», pen-knife «գրիչ-դանակ» և այլն,

ադոք-նամակ, բառարան-տեղեկատու, դիմում- գանգատ, համերգ-շնորհանդես, շոու-հանդիսանք և այլն,

Տարբեր հաստատություններ (նաև ուսումնական), ռեստորաններ, կացարաններ
library-guestroom «գրադարան- հյուրասենյակ»,

museum-preserve «թանգարան-արգելոց»,

restaurant- discotheque «ռեստորան-դիսկոտեկ»,

shop-office «խանութ-գրասենյակ»,

theater-museum «թատրոն-թանգարան»,

university-college «համալսարան-վարժարան» և այլն,

ավտոկցորդ-ննջասենյակ, արգելավայր-թանգարան, դպրոց-արվեստանոց, սրճարան-ռեստորան, տուն-ինտերնատ, ունիվերսիտետ-հանրախանութ և այլն,

Ճարտարապետություն, կառույցներ

cathedral-basilica «տաճար-բազիլիկ»,

monument–statue «հուշարձան–քանդակ»,

sculpture–garden «հուշարձան–պարտեզ»,

sculpture–monument «քանդակ–հուշարձան» և այլն,

ամրոց–բնակավայր, բերդ– ամրոց, բլուր–հնավայր, խուց–քարայր, հուշարձան–
դամբարան, պատշգամբ– առանձնասենյակ և այլն,

Աշխարհի տարբեր կողմեր South–East, South–West, North–East, North–West հարավ–
արևելք, հարավ– արևմուտք, հյուսիս–արևելք, հյուսիս–արևմուտք

Չափման միավորներ watt–hour, kilometre–hour,

kilovolt– ampere, tonne–kilometre, etc վատտ–մետր, կիլոմետր– ժամ, կիլովոլտ–
ամպեր, տոննա–կիլոմետր և այլն

Առդրական հարադրությունների ուսուցումն ավելի արդյունավետ կարող է
դառնալ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ:

Որպեսզի աշակերտներն առավել խորությամբ ընկալեն դրանց կազմությունը և
արտահայտած ամենատարբեր իմաստները, կազմակերպվում են զույգերով և
խմբային աշխատանքներ, որոնց միջոցով զարգանում են նաև աշակերտների
համագործակցային հմտությունները: Աշակերտները շփվում են ոչ միայն ուսուցչի ,
այլև միմյանց հետ, մտքեր փոխանակում և ակտիվություն դրսևորում դասի
ընթացքում:

Ժամանակակից ուսուցչի ամենակարևոր առաքելություններից է ոչ միայն
ուսումնասիրվող նյութը խորությամբ մատուցելը, այլև աշակերտասակենսորեն
ուսուցում ապահովելը:

Առդրական հարադրությունները կարելի է ուսուցանել սմարթ գրաստախտակին .

1. Համապատասխանեցման վարժությունների (matching exercises) միջոցով,
որոնց դեպքում նշված կառույցների բաղադրիչները տրված են երկու առանձին
սյունակներով, սակայն խառը դասավորությամբ: Աշակերտներն աշխատում
են զույգերով. փորձելով գտնել առնչակից իմաստներով բաղադրիչները՝
նրանք պետք է կազմեն առդրական հարադրություններ:

Օրինակ՝ editor–director, museum–preserve և այլն:

2. Երկխոսությունների վրա հիմնված վարժություններով: Տրվում է
երկխոսությունը՝ բաց թողնված տեղերով, որոնք աշակերտները պետք է
լրացնեն՝ տրված առդրական հարադրություններից ընտրելով ճիշտ
տարբերակները:

Այսպես՝

A: Did you go on a trip last week, John?

B: Oh, yes, Bob, we had a wonderful time. We visited a lot of historical sites.

A: Wow, that's great. I guess you also visited the 13th century..... in the south of the country.

B: Yes, we did. It was magnificent. By the way, there were a lot of there. library–guestroom, cathedral–basilica, camper–trailer, visitor–tourist, shop–office.

Այնուհետև աշակերտները բաժանվում են 5 փոքր խմբերի՝ որոշելու Գ+Գ կադապարով առդրական հարադրությունների բաղադրիչների միջև եղած շարահյուսական կապը:

Խմբերից յուրաքանչյուրը պետք է որոշի 10 առդրական հարադրությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը, քանի որ այդ տեսանկյունից առդրական կազմությունները կարող են ունենալ երկակի պատճառաբանվածություն:

Այսպես, բաղադրիչների միջև կարելի է դիտել ն՛ ստորադասական հարաբերություն, որի դեպքում երկրորդ բաղադրիչը մասնավորեցնում է առաջինի իմաստը՝ բժիշկ–վարակազետ, doctor–surgeon «բժիշկ–վիրաբույժ», ն՛ համադասական հարաբերություն՝ բաղադրիչների միջև «և» համադասական շաղկապով , ինչպես՝ բժիշկ և վարակազետ, դպրոց և արվեստանոց և այլն, անգլերենում՝ poet and translator «բանաստեղծ և թարգմանիչ», theater and museum «թատրոն և թանգարան» և այլն.

ընդ որում՝ երկու լեզուներում էլ, երբ փոխում ենք բաղադրիչների տեղերը՝ արվեստանոց–դպրոց և դպրոց–արվեստանոց, poet–translator «բանաստեղծ–թարգմանիչ» և translator–poet «թարգմանիչ–բանաստեղծ», բաղադրության ընդհանուր իմաստը չի փոխվում:

Աշակերտների առաջին խումբը պետք է առանձնացնի որոշիչ–որոշյալի հարաբերությամբ այն կազմությունները, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ բառ է, ինչպես՝ բետա–մասնիկ, բետա–տրոհում, գամմա–ճառագայթ , alpha–receptor «ալֆա– ընդունիչ», beta–ray «բետա–ճառագայթ», gala–performance «գալաներկայացում», gamma–camera «գամմա–ֆոտոխցիկ» և այլն:

Մյուս խումբն առանձնացնում է որոշիչ–որոշյալ կապակցությամբ այն հարադրությունները, որոնց երկու եզրերն են փոխառյալ բառեր, ինչպես՝ բալ–մասկարադ , բիզնես–պլան, ֆեդերալիստ–կանցլեր և այլն:

4–րդ խումբն առանձնացնում է որոշիչ– որոշյալ հարաբերությամբ կազմությունները և այլն: Էլեկտրոնային գարտախտակի շնորհիվ բոլոր բառերը

հատնվում են գրատախտակին և միննույն ժամանակ բոլոր խմբերի առաջադրանքներն են մնում տեսանելի: Աշխատանքն ավարտելուց հետո սմարթ գրատախտակին են մոտենում ավագները և ներկայացնում թիմի աշխատանքը՝ համակարգելով ամեն մեկն իր բաժինը: Այլևս չկա առանձին պաստառներ պատրաստելու կարիք և աշակերտներն էլ կարող են ոչ թե գրել և ջնջել իրենց գրառումներն, եթե դրանք սխալ ստացվի, այլ կատարել համակարգված և մաքուր աշխատանք: Մինչդեռ պաստառների վրա հնարավոր է թույլ տալ սխալ և հետո ներկայացնելիս ցուցադրել տգեղ աշխատանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսուցչի խոսքը վճռական դեր ունի սովորողների խոսքային հաղորդակցման ձևավորման գործում:
2. Խոսքային հաղորդակցումը հարկավոր է իրականացնել ճիշտ ընտրելով խոսքային մեթոդները և դրանք գրագետ կիրառելով:
- 3.«Անգլերեն» առարկայի դասավանդման և խոսքային հաղորդակցման ընթացքում կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:
4. Երեխաների խոսքային կարողությունների ձևավորումը պետք է կապել նրանց խոսքի որոշակի ոճի զարգացման հետ՝ խոսակցական, գիտական, Գեղարվեստական և այլն:
5. Խոսքի օրինակելի նմուշներ երեխաները նախ ստանում են ընտանիքում՝ ծնողներից, հարազատներից, ապա դպրոցում՝ ուսուցիչներից և, հատկապես, այն նյութերից, գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են և պատմում:
6. Կյանքը հասարակությանն ապրելու և գործելու նոր ռազմավարության է պարտադրում, և այդ նոր ռազմավարության մշակումն էլ ամենաընդհանուր իմաստով կազմում է ժամանակակից կրթական քաղաքականության բովանդակությունը:
7. Մեր մանկավարժական պրակտիկայում բոլոր վերոհիշյալ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են տալիս բացահայտել և զարգացնել սովորողների խոսքը, գեղարվեստական ունակությունները, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների իրականացման կարողությունները նաև դաստիարակել ցանկացած գործունեությանը ստեղծագործական վերաբերմունքի ցուցաբերման հատկություն:
- 8.Նորարար մանկավարժությունը պահանջում է ամբողջովին վերանայել մանկավարժական՝ ինչպես ուսուցման այնպես էլ դաստիարակչական գործընթացը, դիտարկել սովորողին որպես գործունեության սուբյեկտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբրահամյան Ս. Գ., Աշակերտի խոսքի զարգացումը, Ե., Լույս, 1973,

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 227–228, Վ.
Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1,
Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 269–271, Ա. Մարգարյան,
Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990,

Ամիրջանյան Յու. Ա. , Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր,

Գասպարյան Գ., Հովհաննիսյան Ն., Քաջբերունի Հ., English 9, մաս 1, Երևան, 2021,

Գասպարյան Գ., Հովհաննիսյան Ն., Քաջբերունի Հ., English 9, մաս 2, 9-րդ դասարանի
դասագիրք, Երևան, 2021,

Звегинцев В . А., История языкознания XIX XXвеков в очерках и извлечениях, часть I,
1960,

Рогова Г., Методика обучения английскому языку (на английском языке), М., 1983,

Энциклопедический словарь юного филолога, Сост. М. А . Азров, М ., 1984 ,

Gasparyan G., English 5, մաս 2, Երևան , 2019,

Olsen S., Coordination in Morphology and Syntax: the Case of Copulative Compounds, “The
Composition of Meaning: from Lexeme to Discourse”, Amsterdam/Philadelphia, 2004, էջ 17–
37:
<https://books.google.am/books?id=46kLFhR5gj4C&pg=PA2&lpg=PA2&dq=Olsen+S.,+Coordination+in+Morphology+and+Syntax:+the+Case+of+Copulative+Compounds>